



# ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԿԱՏ

0010, ՆՆ, ք. Երևան, Զարյան 7-2  
Նեո.՝ (+374 10) 600 701, 600 704  
Նեոպատմունք՝ (+374 10) 600 703  
Էլ-փոստ՝ info@advocates.am  
Կայք՝ www.advocates.am

## ՏԵՂԵԿԱՆՔ

### Հանրային պաշտպանի գրասենյակի խնդիրների վերաբերյալ

10.03.2020թ.

ք. Երևան

#### 1. Հանրային պաշտպանների սոցիալական երաշխիքներ.

«Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *հանրային պաշտպանի և հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալի պաշտոնային դրույքաչափը սահմանվում է Երևան քաղաքի դատախազության ավագ դատախազի համար օրենքով սահմանված պաշտոնային դրույքաչափին հավասար գումարի չափով:*

Այս կարգավորման նպատակն այն է, որ հանրային պաշտպանը որպես քրեական արդարադատության ոլորտում դատախազության ներկայացուցիչներին հավասարազոր մրցակից կողմ ունենա նույնանման սոցիալական երաշխիքներ: Մյուս կողմից, այս կարգավորման նպատակը հանրային պաշտպանի աշխատանքի համար դատախազության ներկայացված պաշտոնին համարժեք կադրերի ներգրավվումը, մրցունակ առաջարկ ունենալն է: Գործնականում, սակայն, իրավիճակն այդ նպատակադրմանը չի համապատասխանում: Իրականում հավասարեցված են միայն դատախազի և հանրային պաշտպանի պաշտոնային դրույքաչափերը, մինչդեռ դատախազները հիմնական աշխատավարձից բացի ստանում են նաև հավելավճարներ և պարգևատրումներ: Բացի դրանից, դատախազներն օգտվում են նաև այլ սոցիալական երաշխիքներից, օրինակ՝ պարտադիր բժշկական ապահովագրություն, սոցիալական փաթեթ հավելյալ բաղադրիչներ և այլն:

Այսպես, «Դատախազության մասին» օրենքի 64-րդ հոդվածի համաձայն՝ *դատախազների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:*

Ըստ վկայակոչված օրենքի 6-րդ հոդվածի՝ *պետական պաշտոն և պետական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձը կազմված է նույն օրենքով սահմանված հիմնական աշխատավարձից, լրացուցիչ աշխատավարձից և պարգևատրումներից: Լրացուցիչ աշխատավարձը ներառում է հավելումները և հավելավճարները:*

Նույն օրենքի համաձայն՝ *դատախազին վճարվում է հավելավճար դատախազի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար երկու տոկոսի չափով*: Բացի այդ, *դատախազը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար*:

Նույն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *յուրաքանչյուր մարմնի համար պարգևատրման ֆոնդը կազմում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով տրված մարմնի համար նախատեսված աշխատավարձի տարեկան ֆոնդի առնվազն 10 տոկոսը*: Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *պետական ծառայողի պարգևատրման չափը հաշվարկվում է նրա հիմնական աշխատավարձի նկատմամբ*:

Փաստորեն օրենքի ուժով յուրաքանչյուր պետական մարմնի աշխատավարձի տարեկան ֆոնդի առնվազն 10 տոկոսի չափով նախատեսվում է պարգևավճարների ֆոնդ, դրան հակառակ, հանրային պաշտպաններին, նույնիսկ առանձին դեպքերում պարգևատրում տրամադրելու հնարավորություն օրենսդրորեն առկա չէ:

### **Լուծման առաջարկ՝**

***Խնդիրը կարող է լուծվել օրենսդրական նախաձեռնության կարգով՝ «Փաստաբանության մասին» օրենքով նախատեսելով հանրային պաշտպաններին պարգևավճարներ տալու հնարավորություն և այդ տեսակետից 10 տոկոսով ավելացնելու ընդհանուր ֆոնդը***:

## **2. Տրանսպորտային փոխհատուցում.**

Հանրային պաշտպանների գործունեության ապահովման հետ կապված այլ ծախսերի փոխհատուցման համար նախատեսված է աշխատավարձի ֆոնդի երեսուն տոկոսի չափով գումար:

Այդ գումարով է կատարվում նաև հանրային պաշտպանների տրանսպորտային ծախսերը:

Երևան քաղաքում 31 հանրային պաշտպանի փոխադրումը կազմակերպվում է երկու տրանսպորտային միջոցներով, որոնք սակայն չեն հասցնում: Այդ պատճառով քրեական գործերով հանրային պաշտպաններին լրացուցիչ փոխհատուցվում է ամսական որոշակի գումար՝ երթուղային տրանսպորտից օգտվելու համար:

Խնդիրը կայանում է նրանում, որ առկա իրավակարգավորումներում, Փաստաբանների պալատը տրանսպորտային փոխհատուցման դիմաց ստիպված վճարում է եկամտային հարկ, քանի որ անհարկի բարդացվում է փաստաթղթավորված տրանսպորտային ծախս ցույց տալը: Օրինակ, որպեսզի հանրային պաշտպանը դատարան գնալու և վերադառնալու համար ստանա 200 ՀՀ դրամ, ապա պետք է ներկայացնի դատական նիստի ծանուցագիրը, դատարանում մասնակցելու փաստը հաստատող ապացույց: Դժվարություններ են առաջացնում, երբ նույն օրվա ընթացքում քննչական գործողություններին և դատական նիստերին մասնակցելու համար հանրային պաշտպանը ստիպված պետք է քրեական գործի բոլոր հատորներն իր մոտ պահել, ինչը երթուղային տրանսպորտով ապահովելը գրեթե անհնար է դարձնում:

**Լուծման առաջարկ՝**

***Խնդիրը կարող է լուծվել օրենսդրական նախաձեռնության կարգով՝ «Փաստաբանության մասին» օրենքով նախատեսելով, որ որոշակի գումար հատկացնելը տրանսպորտային ծախսի դիմաց չի հարկվում: Ընդ որում, փոխհատուցման թույլատրելի չափը կարող է հաստատվել նաև պետական մարմինը:***

**3. Գործերի քանակ - վարձատրություն.**

Յուրաքանչյուր տարի բյուջետային հայտը կազմելիս արդարադատության նախարարությունը կատարում է հաջորդող երեք տարիներին հանրային պաշտպանի գրասենյակի կողմից վարվելիք գործերի քանակի կանխատեսում: Ընդ որում, այդ կանխատեսման համար որպես ելակետ է ընդունվում նախորդ տարիներին վարված գործերի քանակը, որը յուրաքանչյուր տարի կայուն աճ է գրանցում: Թեև բյուջետային հայտերում այդ կանխատեսումներն աճող գործերի քանակի մասին նշվում են փաստացի շեղում այդ կանխատեսումներից մեծ հաշվով չեն լինում, այնուամենայնիվ դա որևէ կերպ չի ազդում հանրային պաշտպանի գրասենյակին հատկացվող միջոցների ծավալը որոշելու վրա: Այլ կերպ ասած, պետությունն ամեն տարի պատվիրում է նախորդ տարիների համեմատ ավելի մեծ ծավալի աշխատանք, սակայն մշտապես այդ աշխատանքի համար վճարում է նույն չափով, թեև փաստացի կատարվում է առաջին տարվա համեմատ կրկնակի ծավալի աշխատանք:

Գտնում ենք, որ հանրային պաշտպանի գրասենյակին հատկացվող միջոցների հաշվարկման համար պետք է ներդրվի կոնկրետ բանաձև, մեխանիզմ, և տրամադրվող միջոցների չափը կհաշվարկվի ըստ մատուցված ծառայության ծավալի:

Սույն տեղեկանքի հավելվածում ներկայացված են վիճակագրական տվյալները:

Ներկա վիճակը հանգեցնում է նաև մեկ այլ խնդրի: ՀՀ փաստաբանների պալատը և նրա կազմում գործող հանրային պաշտպանի գրասենյակը օրենսդրորեն անկախ են պետական մարմիններից, սակայն երբ գրասենյակին տրամադրվող գումարի չափը կապված է լինում բացառապես պետական գերատեսչության հայեցողությունից, ապա այն ճնշման և ազդեցության գործիք է դառնում այդ մարմնի և իշխանությունների համար:

**Լուծման առաջարկ՝**

***Խնդիրը կարող է լուծվել օրենսդրական նախաձեռնության կարգով՝ «Փաստաբանության մասին» օրենքով նախատեսելով կոնկրետ բանաձև, մեխանիզմ, որի հիման վրա տրամադրվող միջոցների չափը հաշվարկել ըստ մատուցված ծառայության ծավալի:***

**4. Արտաժամյա աշխատանք.**

2019 թվականի ընթացքում քրեական վարույթների շրջանակներում հանրային պաշտպանները, որպես հերթապահություն շուրջ 368 անգամ ոչ աշխատանքային

օրերին և ժամերին, այդ թվում՝ գիշերային ժամանակ, մասնակցել են քննչական և այլ դատավարական գործողությունների, որից 308 դեպքում՝ Երևանում, իսկ 60 դեպքում՝ մարզերում:

Հարկ է նկատել, որ դրա համար հանրային պաշտպանները լրացուցիչ չեն վարձատրվում: Այդ խնդիրը Պալատը փորձել է լուծել աշխատանքային ժամերին հանրային պաշտպանին համարժեք չներկայանալու իրավունք վերապահելով, բայց միևնույն է դա հանրային պաշտպանին չի մոտիվացնում աշխատանքային ժամերից դուրս մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողություններին:

**Լուծման առաջարկ՝**

***Խնդիրը կարող է լուծվել սույն տեղեկանքի 1-ին կետում նշված ֆոնդի միջոցով, ինչպես նաև նախաքննության մարմնի կողմից միայն բացառիկ դեպքերում ոչ աշխատանքային օրերին և ժամերին հանրային պաշտպանի գրասենյակին դիմելու պրակտիկա ձևավորվելու միջոցով:***

**5. «Փաստաբանության մասին» օրենք փոփոխությունների նախագծի ընդունման ձախողում.**

Չնայած հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը մեղմելու համար առանցքային նշանակություն ունի լրացուցիչ հաստիքների տրամադրումը՝ այդուհանդերձ Պալատի կողմից ձեռնարկվում են նաև հավելյալ միջոցներ այլընտրանքային լուծումներով վիճակը շտկելու ուղղությամբ: Այդ նպատակով Պալատը մշտապես հանդես է գալիս տարատեսակ նախաձեռնություններով:

Մասնավորապես շրջանառության մեջ էր դրվել «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու նախագիծը, որով, ի թիվս այլնի առաջարկվում էր լրացուցիչ գործիքների ներդրմամբ և այլընտրանքային միջոցներով նվազեցնել պետության ծանրաբեռնվածությունը, սակայն նախագծի ընդունումն Ազգային ժողովում երկրորդ ընթերցման ժամանակ անհասկանալի հիմնավորմամբ տեխնիկական պատճառներով մերժվեց: Ընդ որում, նախագիծը արժանացել էր ՀՀ արդարադատության նախարարության հավանությանը: Ստացվում է մի իրավիճակ, երբ պետությունը տարիներ շարունակ անտարբեր է մնում անվճար իրավաբանական օգնության տրամադրման ոլորտում առկա խնդիրն կամ օբյեկտիվ պատճառներով՝ ֆինանսական միջոցների սղությամբ պայմանավորված չի կարողանում լուծել խնդիրը, սակայն մյուս կողմից մերժում է իրեն առաջարկված այլընտրանքային լուծումները՝ այդպիսով այս ոլորտում ձախողման պատասխանատվությունը վերցնելով իր վրա:

**Լուծման առաջարկ՝**

***Խնդիրը կարող է լուծվել «Փաստաբանության մասին» օրենքում փոփոխությունները և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծն ընդունելով:***

## **6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ.**

Հանրային պաշտպանի գրասենյակի ծանրաբեռնվածությունը նվազեցնելու գործուն մեխանիզմ կարող է լինել նաև քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելը:

Մասնավորապես, գործնականում վարույթն իրականացնող մարմինները, ՀՀ փաստաբանների պալատից փաստաբան պահանջելու միջոցով ապահովվելով քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, միաժամանակ, որպես կանոն, որոշում են կայացնում այդ անձին իրավաբանական օգնության վճարից ազատելու մասին, թեև այդպիսի որոշում կայացնելու պարտադիր պայման բացի որոշ դեպքերի առկա չէ: Ավելին՝ դատավարության սկզբնական փուլում անձի գույքային վիճակի վերաբերյալ տեղեկություններ վարույթն իրականացնող մարմին կարող են քիչ հայտնի լինել կամ ընդհանրապես հայտնի չլինել:

Անվճար իրավաբանական օգնությունը վարույթն իրականացնող մարմինն ապահովում է ինչպես մեղադրյալի անվճարունակ լինելու, այնպես էլ արդարադատության շահի հիմքով:

Գործնականում քիչ չեն դեպքերը, երբ չնայած նախապես կայացված որոշմանը՝ անձին իրավաբանական օգնության վճարից ազատելու մասին, վարույթի հետագա փուլերում անձի անվճարունակ լինելու մասին որևէ տվյալ բացակայում է, ավելին՝ ի հայտ են գալիս անձի վճարունակ լինելու հանգամանքը հավաստող հավաստի տվյալներ:

Այս պարագայում, ոչ իրավաչափ է միայն իրավական կառուցակարգերի բացակայության կամ թերի լինելու հանգամանքով պայմանավորված հանրային միջոցների անհարկի ծախսելը, և դրա հատուցման հնարավորության բացակայությունը: Ըստ այդմ, ստեղծվում է մի իրավիճակ, երբ մասնավոր շահն անհարկի և չհիմնավորված կերպով գերակայում է հանրային շահի նկատմամբ:

### **Լուծման առաջարկ՝**

***Խնդիրը կարող է լուծվել օրենսդրական նախաձեռնության կարգով՝ քրեական դատավարության օրենսգրքում սահմանելով այնպիսի կառուցակարգեր, որպեսզի բացառվի առանց անհրաժեշտ հիմքերի անձին իրավաբանական օգնության վճարից ազատելու դեպքերը և հնարավորություն լինի վճարունակ մեղադրյալներից ստանալ հարուցում արդեն իսկ մարտուցված ծառայությունների համար կամ դատավճռով, կամ դատախազության կողմից համապարասխան պահանջով դատարան դիմելու եղանակով, բացառությամբ երբ անձն արդարացվել է:***

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
նախագահ՝ Արա Զոհրաբյան